

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. հունվարի 17-ից 23-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Հունվարի 19-20-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Հունվարի 17-18-ին և 21-23-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը Ապարան լճայինում կազմել է 17մմ, Ֆանտանում՝ 15մմ, Ամասիայում, Արթիկում և Գորիսում՝ 13մմ, Հրազդանում և Աշոցքում՝ 12մմ, մյուս շրջաններում՝ 0,4-9մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 17-18-ին եղել է նորմայից ցածր 4-8 աստիճանով, 19-23-ին՝ 2-6 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Տավուշում՝ +6...+11°C, Սյունիքի հովիտներում՝ +7...+8°C, նախալեռներում՝ +1°C (Գորիսում՝ +9°C), Լոռիում՝ +2...+6°C (Վանաձոր՝ 0°C), Արարատյան դաշտում՝ +3...+4°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +3°C, լեռներում 0°C, Գեղարքունիքում՝ 0...-5°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +1°C (Թալին՝ -5°C), լեռներում՝ -4...-6°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ -1°C, լեռներում՝ -4...-6°C, Շիրակում՝ -5...-8°C և Երևանում՝ +1...+2°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Շիրակում՝ -18...-21°C (Գյումրի՝ -6°C, Աշոցք՝ -26°C), Արագածոտնում՝ լեռներում՝ -24...-26°C, նախալեռներում՝ -12...-15°C Գեղարքունիքում՝ -14...-17°C (Մարիկում՝ -24°C, Գավառ՝ -21°C), Կոտայքում՝ լեռներում՝ -16°C (Հրազդան՝ -22°C), նախալեռներում՝ -16°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -22°C, նախալեռներում՝ -13°C, Լոռիում՝ -11...-15°C (Վանաձոր՝ -17, Տաշիր՝ -18), Արարատյան դաշտում՝ -12...-14°C, Տավուշում՝ -10...-13°C, Սյունիքի նախալեռներում՝ -12°C (Սիսիան՝ -24°C), հովիտներում՝ -7°C (Կապան՝ -13°C) և Երևանում՝ -12...-14°C:

Հունվարի 19-20-ին առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 300-500մ տեսանելությամբ:

Հունվարի 19-ին, 21-24-ին առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում 15-18մ/վրկ, պոռթկումների ժամանակ 20-25մ/վրկ (Մարտունի՝ 28մ/վրկ) արագությամբ:

Հունվարի 24-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը կազմում է Արագած բ/լ-ում՝ 85սմ, Ամբերդում՝ 70սմ, Ջերմուկում՝ 57սմ, Ապարանում և Ամասիայում՝ 49սմ, Հրազդանում՝ 47սմ, Ֆանտանում՝ 40սմ, Սեմյոնովկայում՝ 34սմ, մնացած լեռնային շրջաններում՝ 2-32սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ (16.01.22-23.01.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.40մ (23.01.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 12 սմ-ով: